

գ) Ս. Ծննդեան աստղին առանդուքիւնը ըստ Ս. Յովհաննէս Ռոմեքերանի. — Ս. Ծննդեան աստղի աւանդութեան մասին Ռոմեքերան (324 – 407) հետեւեալ կերպով կ'արտայայտուի. «Եթէ ստոյգ իմանալ ուզենք թէ Ս. Ծննդեան աստղը ի՛նչ էր կամ ի՛նչպիսիք բան մը, թէ ան բազմաթիւ աստղերէն մի՞ն էր թէ ուրիշ մը, թէ ան արդարեւ աստղ մըն էր թէ միայն կերպարանքով աստղ մը, դիւրագոյն կերպով կարելի էր հասկնալ: Այս կէտը անտարակոյս զրուածքներէն յայտնի պիտի ըլլայ: Անիկա բազմաթիւ աստղերէն էր, ինչպէս կը կարծեմ աստղ ալ էր, այլ աներեւոյթ զօրութիւն մը այդ կերպարանքով երեւցած: Նախ գնացքէն ալ յայտնի է, վասնզի աստղը այդ կերպով չի գար և ճանապարհ ցոյց չի տար: Արեգակը, լուսինը կամ ուրիշ աստղեր արեւելքէն արեւմուտք կ'երթան, իսկ ան հիւսիսէն հարաւ կ'երթար, վասնզի Պաղեստինը Պարսկաստանի հարաւը կը գտնուէր:

Դարձեալ նոյն ժամանակէն կարելի է հասկնալ պատշաճը, վասնզի ան գիշերը չէր երևէր, այլ ցերեկ ժամանակ, և կը ծագէր արեւին ճառագայթներուն միջև, մինչդեռ աստղ մը այդ զօրութիւնը չունէր, ինչպէս լուսինը անգամ, որ թէպէտեւ բոլոր աստղերէն ալ առաւելագոյն է, բայց արեգակին ճառագայթներուն երեցած ժամանակ կը ծածկուի և կը նուազի, իսկ Ս. Ծննդեան աստղը իր լուսաւորութեան առաւելութեամբը արեւին ճառագայթները կը խախտէր և կը քայքայէր, անոնց աւելի լուսաւոր երևնալով՝ վասնզի արեւի լոյսէն աւելի մեծապայծառ կը ծագէր:

Երրորդ, կ'երևար և կը ծածկուէր դարձեալ մինչ Պաղեստինի մէջ կ'երևնար և կ'առաջնորդէր, և երբ